ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«____» _____ 20 թ.

No _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
/էլ-փոստ՝ foi@foi.am/

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 348-72 գրության՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում հարցումների առանձին վիճակագրություն վարելու վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ Կոմիտեում հարցումների առանձին վիճակագրություն չի վարվում, հարցումները ներառված են քաղաքացիներից և կազմակերպությունների ներկայացուցիչներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ և հաշվառվում են դիմումների ընդհանուր համատեքստում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում գրավոր դիմումների (ներառյալ հարցումների) ընդհանուր վիճակագրության վարման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի քարտուղարության կողմից, իսկ բանավոր հարցումների վիճակագրության վարման գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կողմից:

Դիմումների (ներառյալ հարցումների) ընդհանուր վիճակագրությունը ձևավորվում է քաղաքացիների, կազմակերպությունների ներկայացուցիչների, լրատվամիջոցների կողմից ներկայացված գրավոր դիմումների և հեռախոսազանգերի

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

հիման վրա: Գրավոր դիմումները (ներառյալ հարցումները) ստացվում են թղթային եղանակով՝ փոստով կամ առձեռն և էլեկտրոնային փոստով, իսկ բանավոր հարցումները ստացվում են հեռախոսազանգերի միջոցով:

Նշված վիճակագրությունը պարբերաբար հրապարակվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջում՝ համապատասխան հղումներով՝ https://petekamutner.am/si.aspx?itn=siCallCenter, https://petekamutner.am/si.aspx?itn=siRequestsReport:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լուսինե Մկրտչյանն է (https://petekamutner.am/si.aspx?itn=asInfoRespOfficial, համապատասխան հրամանի պատճենը կցվում է):

Լուսինե Մկրտչյանը տարբեր տարիների մասնակցել է հայաստանյան և արտասահմանյան հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ ԻԱԿ-ի) կողմից կազմակերպվող տեղեկատվության ազատության վերաբերյալ դասընթացների, սեմինարների և այլ համանման միջոցառումների:

Recoverable Signature

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ քարտուղարության
ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Տ. Խաչատրյան հեռ.՝ 060 844 337